Հավելված
ՀՀ կառավարության 2017 թվականի
սեպտեմբերի 7-ի N 1107 - Ն որոշման

ՀԱՐԿԱՅԻՆ ՀԱՇՎԱՐԿՆԵՐԸ ՀԱՐԿԱՅԻՆ ՄԱՐՄԻՆ ԹՂԹԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԴԵՊՔԵՐԸ

1. Սույն կարգով կարգավորվում են հարկային հաշվարկները հարկային մարմին թղթային եղանակով ներկայացնելու հետ կապված հարաբերությունները:

2. Հարկային հաշվարկները՝ բացառությամբ եկամտային հարկի հաշվարկի, հարկային մարմին թղթային եղանակով կարող են ներկայացվել հարկային մարմնի ծրագրային համակարգի խափանման դեպքում:

3. Հարկային մարմնի ծրագրային համակարգի խափանման դեպքում եկամտային հարկի հաշվարկը ներկայացվում է ծրագրային համակարգի խափանումն ավարտվելուց հետո՝ էլեկտրոնային եղանակով:

4. Հարկային մարմնի ծրագրային համակարգի խափանման փաստը թղթային եղանակով հարկային հաշվարկներն ընդունող աշխատողի կողմից ստուգվում է հարկային մարմնի պաշտոնական կայքում հրապարակված տեղեկատվության հիման վրա, որտեղ նշվում են խափանման ժամկետի սկիզբը և ավարտը:

5. Հարկ վճարողները թղթային եղանակով հարկային հաշվարկները հարկային մարմին ներկայացնում են փոստային կապի միջոցով՝ պատվիրված նամակով կամ առձեռն:

6. Հարկային մարմին թղթային եղանակով ներկայացված հարկային հաշվարկները կազմվում են հարկային մարմնի սահմանված ձևերին և լրացման կարգին համապատասխան:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Վ. ՍՏԵՓԱՆՅԱՆ

17_1107